

**ԳԱՆՁԱԴԵՏ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՈՒՉ ՔԵՅԹ ԼՈՔՍԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՏՈՒՅԺԻ ԶԵՂԱՐԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ես հասկանում եմ, որ հանրության առողջության համար ստեղծված ճգնաժամը շարունակում է մեծ լարվածություն պատճառել յուրաքանչյուրին, և իմ գրասենյակը փորձում է աջակցել մարդկանց բոլոր հնարավոր ձևերով: Մենք ունենք բնակիչների և գույքատերերի հետ արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք էին վերջին հրդեհները, աշխատելու երկարատև փորձ: COVID-19 համավարակի ստեղծած ճգնաժամը բացառությունն չէ: COVID-19 համավարակից տուժած գույքատերերը մինչև 2020թ. ապրիլի 10-ը գույքահարկը վճարել չկարողանալու դեպքում կարող են չեղարկել ուշացումների հետևանքով հաշվարկված տույժերը:

Սկսած 2020թ. ապրիլի 11-ից՝ իմ գրասենյակը կսկսի ընդունել COVID-19 համավարակով պայմանավորված տույժի չեղարկման հայտերը, որոնք կներկայացվեն մեր կայքի միջոցով: Եթե ունեք հատուկ հարցեր տույժերի չեղարկումների վերաբերյալ, խնդրում ենք ուսումնասիրել հետևյալ հաճախ տրվող հարցերը ([ՌՏՅ](#)):

Հանրության առողջության համար COVID-19 համավարակի ստեղծած ճգնաժամից տուժած գույքատերերը պետք է լրացնեն և ուղարկեն [տույժի չեղարկման հայտն առցանց](#) և կցեն համառոտ հայտարարություն այն մասին, թե հանրության առողջության համար ստեղծված արտակարգ դրությունն ինչպես է ազդել գույքահարկի վճարումը ժամանակին կատարելու նրանց կարողության վրա: Առցանց հայտ ներկայացնելու խնդիրներ ունեցող գույքատերերը իրենց հայտը լրացնելու համար պետք է զանգահարեն մեր գրասենյակ՝ 213-974-2111 հեռախոսահամարով:

Նահանգային օրենսդրությունը թույլ է տալիս ինձ հաշվի առնել հարկատուի հսկողությունից դուրս հանգամանքները, որոնք խոչընդոտ են հանդիսացել գույքահարկի վճարումները ժամանակին կատարելու համար, և ես ցանկանում եմ իմ աջակցությունը ցուցաբերել COVID-19 համավարակով պայմանավորված հանգամանքներից տուժած հարկատուներին: Տույժի չեղարկման յուրաքանչյուր հայտում հարկատուն պետք է մանրամասն ներկայացնի, թե հանրության առողջության համար COVID-19 համավարակի ստեղծած արտակարգ իրավիճակը հատկապես ինչպես է խոչընդոտել հարկատուին ժամանակին կատարել վճարումը:

Յուրաքանչյուր հայտն ուղարկելուց հետո հարկատուն կստանա հաստատող էլ. նամակ՝ հաստատման համարով: Խնդրում ենք պահել հաստատման համարը և այն տրամադրել հետագա ողջ հաղորդակցության ընթացքում: Մենք կուսումնասիրենք յուրաքանչյուր գործը՝ ելնելով տվյալ գործի անհատական հանգամանքներից: Եթե իմ թիմն ունենա դիմումի հետ կապված լրացուցիչ տեղեկությունների կարիք, մենք ուղիղ կապ կհաստատենք հարկատուի հետ էլեկտրոնային փոստի միջոցով: Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ մեր թիմն առանց նախապես պայմանավորվածության չի զանգահարի և պահանջի հեռախոսով տրամադրել ոչ հրապարակային անձնական տվյալներ:

Յուրաքանչյուր հայտի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո իմ թիմն ուղիղ կապ կհաստատի հարկատուի հետ՝ գույքահարկի վճարման տարբերակները և ժամկետները քննարկելու համար: Հայցում եմ ձեր համբերությունը հայտերի մշակման ժամկետների համար, քանի որ մենք աշխատում ենք այդ հայտերի ուղղությամբ:

Շնորհակալություն